ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.7. Որակի ապահովում

Առաքելությունն իրականացվել է

Տկն Կարին Բլիքսի կողմից, Դանիայի Վիճակագրություն

2016թ. օգոստոսի 23-26

Վերջնական տարբերակ

ՀՀ ազգային
վիճակագրական
ծառայություն

STATISTICS
DENMARK

<u>Փորձագետի կոնտակտային տվյալներ</u>

Կարին Բլիքս
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիայի
Հեռ: +45 3917 3155
Էլ-փոստ: kwb@dst.dk

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 3
2. Գնահատում և արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկություններ 8
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 10
Հավելված 2. Առաքելության ծրագիր 10
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ 13

Հապավումների ցանկ

ԵՄ Եվրոպական միություն
ԱՎՀ Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրության)
ՀՀ ԱՎԾ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս առաքելության զեկույցը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա բաղադրիչ 1-ի յոթերորդ առաքելությունն էր, որի համար պլանավորված գործողություններն իրականացվել են համաձայն ժամանակացույցի:
Առաքելության նպատակներն էին.

- Որակի կառավարում և որակի ապահովման շրջանակ
- GSBPM-ի քննարկում
- Որակի բաժնի ստեղծում

ԱԵ փորձագետն իր երախտիքն է հայտնում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, ում հետ հանդիպել է՝ նրանց աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որոնք ստացել է Հայաստանում իր գտնվելու ընթացքում, և ինչը մեծապես հեշտացրել է իր աշխատանքը: Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են խորհրդատուին և որևէ կերպով չեն արտահայտում ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

2. Գնահատում և արդյունքներ

Սույն առաքելության առաջին օրն օգտագործվեց տկն Անահիտ Սաֆյանի և որակի բաժնի հետ: Քննարկվեց ՀՀ ԱՎԾ ընթացիկ իրավիճակի գնահատումը: ՀՀ ԱՎԾ-ն երկար ճանապարհ է անցել՝ ստեղծելով որակի կառավարման համակարգ: Նախորդ Թվինինգից ի վեր 138 վիճակագրական արտադրանքի համար պատրաստվել են որակի հռչակագրեր, որոնք կարելի է տեսնել ՀՀ ԱՎԾ կայքում: 138 վիճակագրական արտադրանքի համար արտադրման գործընթացի նկարագրությունը պատրաստվել է ըստ GSBPM կառուցվածքի: Ստեղծվել է երեք աշխատակիցներով որակի կառավարման բաժին:

Երկրորդ օրը ԱԵ փորձագետը ներկայացրեց Եվրոպական միության որակի շրջանակը և մասնավորեցրեց Դանիայի վիճակագրության շրջանակը: Նա ներկայացրեց ԵՎՀ փորձառության օրենսգիրքը՝ նույն համատեքստում ներկայացնելով նաև ԵՎՀ որակի ապահովման շրջանակը, ինչպես նաև Դանիայում որակի ներքին աուդիտը: Ներկայացվեց տեղական դանիական շրջանակը: Մասնավորապես քննարկվեց որակի կառավարման կազմակերպումը: Այս կազմակերպման սկզբունքը պատկերված է 1-ին նկարում:

Սկսած 2015թ.-ից Դանիայի վիճակագրությունը ստեղծել է տնօրենների խումբ որակի, մեթատվյալների և վիճակագրական մեթոդների գծով: Այս տնօրենների ենթակայության ներքո երեք աշխատանքային խումբ կա, մեկը՝ որակի գծով, մյուսը՝ մեթատվյալների և երրորդը՝ վիճակագրական մեթոդների: Որակի խումբը ղեկավարում է Դանիայի վիճակագրության որակի համակարգողը, իսկ հինգ անդամները նշանակվում են հինգ տնօրեններից յուրաքանչյուրի կողմից: Այս անդամները կամ բաժինների պետեր են, կամ բաժինների պետերի տեղակալներ: Տնօրենների խմբի խնդիրներն են սահմանել ընդհանուր ռազմավարությունը, ձևակերպել աշխատանքային սկզբունքները և որոշել ծրագրերը: Աշխատանքային խմբի աշխատանքն իրենից ներկայացնում է ուղեցույցերի, գործիքների, դասընթացների ծրագրերի ձևակերպում և օգնության և խորհրդատվության տրամադրում: Գործընթացի և փաստացի արդյունքի, ինչպես նաև տրված ուղեցույցներին և խորհրդատվությանը հետևելու համար պատասխանատու են թեմատիկ բաժինները:



Նկար 1

Նաև քննարկվեցին Դանիայի վիճակագրությունում որակի ներքին աուդիտի համար վարվող սկզբունքները: Այս աուդիտների համար սկզբունքները պատկերված են Նկար 2-ում:

2014թ.-ին 3 վիճակագրական արտադրանքի գծով պիլոտներ իրականցնելուց հետո 2015թ.-ին Դանիայի վիճակագրությունը սկսեց անցկացնել որակի ներքին աուդիտներ: Սկիզբը դանդաղ էր. Երեք վիճակագրություն 2014թ.-ին և վեցը՝ 2015թ.-ին, որոնք պետք է աուդիտի ենթարկվեին: Աուդիտը հիմնված է ԵՎՀ Փորձառության օրենսգրքի վրա: Այն սկսվում է ինքնագնահատման ձևաթղթից, որը պարունակում է Փորձառության օրենսգրքի 4-րդ սկզբունքի ցուցանիշները: Վիճակագրական բաժիններին որպես ուղեցույց տրվում է ԵՎՀ որակի ապահովման շրջանակը՝ հասկանալու համար թե ինչ կարող է արվել արտադրանքի մակարդակով, որպեսզի իրականացվեն Փորձառության օրենսգրքի ցուցանիշները: Աուդիտի հանդիպում է կազմակերպվում մի կողմից բաժնի պետի և այն անձի հետ, ով պատասխանատու է վիճակագրության ամենօրյա վարման համար, մյուս կողմից որակի համակարգողի և երկու փորձագետների հետ, որոնցից մեկը ավագ փորձագետ է, մյուսը՝ կրտսեր: Այս հանդիպման նպատակն է պատկերացում կազմել վիճակագրության արտադրման գործընթացների մասին՝ օգտագործելով GSBPM-ը որպես շրջանակ և պարզել ցանկացած ոչ հստակ հարցեր, որոնք բացահայտվել են ինքնագնահատումից հետո: Այս հանդիպումից հետո աուդիտի հաշվետվություն է նախագծվում, որում մատնանշվում են ինքնագնահատման ձևաթղթից և փորձագետների խմբի ընկալումից պարզված որոշ ուժեղ և թույլ կողմեր: Սրա հիման վրա տրվում են բարելավման

առաջարկություններ: Սրանից հետո փորձագետների խումբը, բաժնի պետը և վիճակագրության վարման համար պատասխանատու անձը հանդիպում են հավաստիանալու համար, որ առաջարկությունների հիմքում ընկած ընկալումները սխալ չեն: Երբ հաշվետվությունը վերջնական տեսքի է բերվում, վիճակագրական բաժինը ներկայացնում է գործողությունների պլան՝ ներկայացված առաջարկությունների հիման վրա: Ե՛վ զեկույցը և գործողությունների ծրագիրը ուղարկվում են տնօրենների խմբին: Որակի համակարգողը երեք ամիսը մեկ հետևում է գործողությունների ծրագրի կատարմանը:



Նկար 2

Դանիայի վիճակագրության որակի հոչակագրերը նույնպես քննարկվեցին: Տվյալների կառավարման համար Դանիայի վիճակագրությունն ընտրել է Colectica (Կոլեկտիկա) ծրագիրը՝ հիմնված DDI-ի վրա: Որակի հոչակագրերն առաջինն էին,

որ մուտքագրվեցին: Այս պահին Դանիայի վիճակագրությունում ծրագիր է իրականացվում՝ Կոլեկտիկայում ներառելու դասակարգիչների և փոփոխականների վերաբերյալ մեթատվյալներ: Դանիայի վիճակագրության ղեկավարությունը որոշել է, որ վիճակագրական արտադրանքի ցանկացած նոր տարածմանը պետք է հաջորդի որակի հռչակագրի նոր և թարմացված տարբերակ: Որակի ապահովման ընթացակարգը սահմանվել է այնպես, որ որակի հռչակագրերը պետք է հավանության արժանանան որակի համակարգողի կողմից նախքան դրանք կարելի կլինի տարածել:

Նաև ներկայացվեցին GSBPM-ը և GAMSO-ն: GAMSO-ն չի կիրառվում Դանիայի վիճակագրությունում սկսած 2009-ից: Առայժմ ոչ բոլոր վիճակագրական բաժիններն են այն օգտագործում, բայց այն տարածում է գտնում: GSBPM-ն ակտիվորեն օգտագործվում է որակի ներքին աուդիտի մեջ, և եթե որևէ վիճակագրական արտադրանք չունի գործընթացային փաստաթղթավորում, ապա առաջարկություններից մեկը կլինի պատրաստել այն:
Քննարկվեց, թե ինչ պետք է ՀՀ ԱՎԾ-ն անի հաջորդիվ կապված GSBPM-ի հետ: ՀՀ ԱՎԾ-ում արդեն առկա են արտադրական գործընթացի նկարագրություններ138 արտադրանքի համար: Այս նկարագրությունները տեքստային են: ՀՀ ԱՎԾ համար հաջորդ քայլն է ներկայացնել գործընթացային նկարագրությունները գծապատկերներով՝ տեսողականորեն: Սա կարող է պատկերվել համաձայն դանիական վիճակագրական արտադրանքի վերաբերյալ օրինակի, որը ներկայացված է 3-րդ նկարում:



Նկար 3.

3-րդ նկարում տեքստը դանիերեն է: Այն ցույց է տալիս GSBPM-ի տեսողական նկարագրության սկզբունքները: «Լողավազան»-ը ցույց է տալիս գործողություններն ընդամենը, կապված 4.2 գործընթացի հետ (հավաքագրում): Այս “լողավազան”-ում երկու “գիծ” կա, որոնցից յուրաքանչյուրը սույն գործընթացում յուրաքանչյուր կատարողի կամ գործառույթի համար է, մեկը՝ վիճակագրության ամենօրյա վարման համար պատասխանատուի, մյուսը՝ պատասխանատու բաժինը՝ նյութեր տպագրելու և ռեսպոնդենտներին ուղարկելու

համար: Դեղին վանդակները պատկերում են տարբեր գործողություններ, իսկ կանաչները գործողությունների համար օժանդակ նյութեր (հասցեներ, հարցաթերթի ձևեր և այլն):

Երրորդ օրը ԱԵ փորձագետը ՀՀ ԱՎԾ բաժինների պետերին ներկայացրեց որակի ապահովման շրջանակը և GSBPM-ը: Թեև շատ քննարկումներ չեղան, բայց լսարանի կողմից գլխով դրական նշանը և փոքր մեկնաբանությունները մատնանշեցին նրանց ծանոթությունը և՛ որակի ապահովման շրջանակի և՛ GSBPM-ի հետ, ինչպես նաև մատնանշեցին նրանց կողմից որակի կառավարման կարևորության ընկալումը:

Չորրորդ օրը որակի բաժնի հետ վերահսկող հանդիպում իրականացվեց: Ներկայացվեց վիճակագրական արտադրանքի համար սահմանված փոփոխականների դանիական համակարգը (TIMES): Այնուհետև տրվեցին GSBPM-ի իրականացման որոշ օրինակներ և՛ փաստաթղթերի կառուցվածքի ձևաչափով և՛ HTML լուծումներով գործընթացային փաստաթղթավորման ձևաչափով: Նաև ներկայացվեց մեկ օրինակ, թե ինչպես է փաստացի արտադրումն իրականացվում HTML լուծումներով:

Օրը և առաքելությունն ավարտվեց ՀՀ ԱՎԾ նախագահ պրն Մնացականյանի հետ հանդիպելով: Այս հանդիպմանը ԱԵ փորձագետը ներկայացրեց առաքելության եզրակացությունները և առաջարկությունները՝ ՀՀ ԱՎԾ-ում որակի կառավարման հետ կատարվելիք հետագա աշխատանքի հետ կապված:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

ԱԵ փորձագետը տպավորված է ՀՀ ԱՎԾ որակի հետ կապված աշխատանքով, նվիրումով և իրավիճակով: Պարզ է, որ որակի կարևորությունը քաջ հայտնի է բոլոր վիճակագրական բաժիններին: Նաև պարզ է, որ ՀՀ ԱՎԾ-ն որպես հաստատություն հավակնոտ է իրենց աշխատանքի որակի առնչությամբ, բայց միևնույն ժամանակ փնտրում է խորհրդատվական հնարավորություններ՝ ուղղված կազմակերպությունում որակի աշխատանքի բարելավմանը և ձեռնարկվելիք զարգացման քայլերին և դրանց հերթականությանը:

Ներկայացվել են հետևյալ առաջարկությունները.

- Շարունակել թարմացնել և բարելավել որակի հռչակագրերը
- Լինել հավակնոտ, բայց բերանը շատ լիքը չլցնել (բարելավում քայլ առ քայլ)
- 138 գործընթացային նկարագրությունները դարձնել տեսողական գործընթացային նկարագրություններ (“լողավազանի գծեր”)
- Պլանավորել վերապատրաստման դասընթացներ որակի հարցերի վերաբերյալ
- Թարգմանել որակի ապահովման շրջանակը հայերեն և ներկայացնել այն կազմակերպությանը

- Իրականացնել որակի ներքին աուդիտի 2 պիլոտներ՝ հետևելով դանիական մոդելին
- Փնտրել միջազգային վերապատրաստումներ որակի բաժնի աշխատակիցների համար

Ներկայացվել է հետևյալ ճանապարհային քարտեզը և ժամանակացույցը.

- Պատրաստել գործընթացային փաստաթղթավորում («լողավազան և գծեր») էլեկտրատրանսպորտի վիճակագրության վերաբերյալ Կարին Բլիքսի հետ
  Վերջնաժամկետ. 2016թ. նոյեմբերի 15
- Պատրաստել գործընթացային փաստաթղթավորում համաձայն GSBPM-ի գծապատկերներով (լողավազաններ) 5 վիճակագրական արտադրանքի համար
  Վերջնաժամկետ. Առաքելություն 1.8 (2017թ.ապրիլ)

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15 **2016թ. օգոստոսի 23-26**

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Գործողություն 1.7. Որակի ապահովում

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Պատրաստի վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակված հարցաթերթ (2017թ. հուլիս)
- Վիճակագրական տեղեկատվության տարածման գծով վերապատրաստված ԱՎԾ անձնակազմ (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Որակի կառավարում և որակի ապահովման շրջանակ
- Քննարկումներ վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդելի/GSBPM վերաբերյալ
- Որակի բաժնի ստեղծում

2. Գործողության սպասվող արդյունքը

- Առաջարկություններ որակի կառավարման ապահովման, վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդելի/GSBPM, GSBPM-ի իրականացման և ՀՀ ԱՎԾ-ում որակի բաժնի ստեղծման վերաբերյալ

3. Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Ստեփան Մնացականյան
- Տկն Անահիտ Սաֆյան
- Տկն Ռուզաննա Շաբոյան

Այլ աշխատակիցներ

- Պրն Արթուր Ամիրխանյան
- Տկն Անահիտ Գրբոյան

<u>ԱԵ փորձագետներ</u>

Տկն Կարին Բլիքս, փորձագետ, Դանիայի վիճակագրություն

<u>Գործողությանը մասնակցող այլ շահառուներ</u>

Աշխատաժողով բաժինների պետերի հետ

Հավելված 2. Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երեքշաբթի, կեսօր *(23/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երեքշաբթի, կեսօրից հետո *(23/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Իրավիճակի գնահատում և ՇԵ կողմից կատարված աշխատանքի ներկայացում վերջին առաքելությունից հետո Եվրոպական որակի ստանդարտների ներկայացում
Չորեքշաբթի, առավոտ *(24/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկումներ որակի ապահովման շրջանակի մասին
Չորեքշաբթի, կեսօրից հետո *(24/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Մանրամասն քննարկում GSBPM-ի մասին և ընդհանուր քննարկում GAMSO-ի մասին
Հինգշաբթի, առավոտ *(25/8)*	ՀՀ ԱՎԾ / *Հանդիպումների սենյակ*	Աշխատաժողով	Հանդիպում բաժինների պետերի հետ (աշխատաժողով)
Հինգշաբթի, կեսօրից հետո *(25/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վերջնական եզրակացությունների, ճանապարհային քարտեզի և առաքելության հաշվետվության պատրաստում
Ուրբաթ, առավոտ *(26/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ Չպլանավորվ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում Վերջնական պարզաբանումներ ՇԵ փորձագետների հետ,

		ած հանդիպումնե ր	հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ կեսօրից հետո *(26/8)*	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ԱԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ և որոշումներ և դրանց եհտանքները հաջորդ գործողության համար և աշխատանքային ծրագիրը ԱԵ փորձագետների համար

Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք

<u>ՀՀ ԱՎԾ.</u>

- Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
- Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Գերոգի Թորոսյան, Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին
- Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
- Աննա Անտոնյան, Պարենային ապահովության վիճակագրության բաժին
- Անահիտ Նազարյան, Շինարարության վիճակագրության բաժին
- Արամ Քյոսեյան, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն
- Գոհար Նշանյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Աննա Թոխատյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
- Հասմիկ Եղիազարյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
- Դիանա Մարտիրոսովա, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Լուսինե Մարկոսյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Անահիտ Գրբոյան, Որակի կառավարման բաժին
- Արթուր Ամիրխանյան, Որակի կառավարման բաժին
- Լաուրա Գրիգորյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժին
- Նվարդ Գրրգորյան, Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին
- Մնացական Խաչատրյան, Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին
- Մարիամ Երիցյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին

- Գայանե Պետրոսյան,Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
- Զարուհի Ավետիսյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
- Աննա Հակոբյան,Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Սուսան Հունանյան,Աշխատանքի վիճակագրության բաժին

<u>ԹՄԽ թիմ.</u>

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
- Սոնա Միրզոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, Թարգմանիչ